

3366.

3K33  

---

Z-75



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Պրոլետարներ բոլոր երկրների, միացե՛ք.

4. ՍՑԱԼԻՆ.

ՀՈԿՏԵՄԲԵՐԵԱՆ ՑԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ

Ե Ի

ԱԶԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐՑԸ

3K33  
2-75

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՍՑԱՆԻ ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ № 31

ՄԱՍԿՈՒՆ 1919

7, 5 AUG 2013

3366

24 JUN 2005

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՈՄՄՈՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՈՄՄՈՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ

300

Պրոլետարները բոլոր կողմերից միացե՛ք.

1609-US 3K33 2-75

Կ. ՍՏԱԼԻՆ.



ՀՈԿՏԵՄԲԵՐԵԱՆ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ

Ե Ի


ԱԶԳՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀԱՐՑԸ

1003  
19401

ՀՐԾԱՐԱՐՈՒԹԻՒՆ

№ 31 ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՄՈՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ № 31

ՄՈՍԿՎԱ—1919.



## ՀՈՎՏԵՄԲԵՐԵԱՆ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱԶԳՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀԱՐՑԸ

Փետրւարեան չեղափոխութիւնը և ազգային հարցը.

Բուրժուական չեղափոխութեան ժամանակ 1917 թւին փետրւարին, ազգային շարժումը Ռուսաստանի ժայռամասերում կրում էր բուրժուական—ազատագրական շարժման բնոյթ: Դարերի ընթացքում հին բեժիմի կողմից ճնշուող և շահագործուող ազգութիւնները առաջին անգամ ոչժ գեղացին իրենց մէջ, և պառաստ էին կուսի ելնելու ճնշողներին դէմ:

«Ազգային ճնշումների լիկվիդացիա» - այդպէս էր շարժման լոզունդը: Ռուսաստանի ժայռամասերը մի ակնթարթում ծածկւեցին «համազգային» հիմնարկութիւններով: Շարժման զլուխն կանգնել էր բուրժուական-դեմոկրատիկ ինտելլիգենցիան. «Ազգային Խորհուրդները» Լատւիայում, Էստոնիայում Լիտւայում, Վրաստանում, Հայաստանում, Ադերբեյջանում և Կովկասի քաղաքներում, Կիրգիզիստան—

նում և Վօլգայի շքանում. «Բաղան Ուկրաինա-  
յում և Բելորուսիայում», «Մֆոտուլ Ցերին» Բե-  
սարաբիայում, «Կուրուլտայր» Ղրիմում և Բաշ-  
կիրիայում, «Ինքնավարական Կառավարութիւնը»  
Թուրքեստանում—ահա այն «Համագլխին» ինտրի-  
տուաները որոնց շուրջը խմբում էր իր ուժերն  
աղգային բուրժուազիան: Խօսքը ցարիզմից աղա-  
ւելու մասին էր. ցարիզմը հիմնական պատճառն  
էր աղգային ճնշումների և աղգային բուրժուա-  
ական պետութիւնների կազմակերպման:

Աղգութիւնների ինքնօրոշման իրաւունքը  
բացատրւում էր այնպէս, թէ աղգային բուրժու-  
ազիան իրաւունք ունի ծայրամասերում իր ձեռքն  
առնել իշխանութեան ղեկը և օգտագործել փե-  
տրւարեան լեղափոխութիւնը լանուն «սեփական»  
աղգային տէրութեան:

Յեղափոխութեան լեռագայ զարգացումը շա-  
հաւէտ չէր շեշտւած բուրժուազիայի համար:  
Բայց մոռացւում էր այն, որ ցարիզմից լեռոյ հան-  
դէս պիտի գայ մերկ և դիմակազօրկ իմպերիա-  
լիզմը, մոռացւում էր այն, որ այդ իմպերիալիզմը  
աղգութիւնների ուժեղ և աւելի վտանգաւոր թրշ-  
նամին է և հեղինակն է նոր աղգային ճնշումների:  
Սակայն ցարիզմի տապալումը և բուրժուական կա-  
ռավարութեան կազմակերպումը վերջ չի դնում  
աղգային ճնշումներին:

Աղգութիւնների ճնշման կոպիտ արտայայաու-  
թիւնների փոխարէն կիրաււում են այսուհետև  
ճնշումների նոր, աւելի նուրբ, բայց միաժամանակ  
աւելի ևս վտանգաւոր ձևեր: Լվով-Միլիեկովի-  
Կերենսկու կառավարութիւնը ոչ միայն չի կտրում  
իր կապը ճնշումների քաղաքականութեան հետ,  
այլ կազմակերպում է մի նոր արշաւանք Փինդեան-  
դեայի (1917 թ. ամառւա Սէյմի ցրումը) և Ուկ-  
րաինայի դէմ (կուլտուրական հիմնարկութիւնների  
օչնչացումը Ուկրաինայում): Դեռ աւելին ևս. այդ  
կառավարութիւնը իր էութեամբ լինելով իմպե-  
րիալիստական կոչ արեց ժողովրդին շարունակե-  
լու պատերազմը նոր երկրամասեր, գաղութներ և  
աղգութիւններ գրաւելու նպատակով: Նրան ստի-  
պում էր այդ անել ոչ միայն իմպերիալիզմի ներ-  
քին բովանդակութիւնը, այլև այն հանգամանքը,  
որ արեւմուտքում գոյութիւն ունէին իմպերիալիս-  
տական պետութիւններ, սրունք միշտ ձգտում էին  
զաւթել նորանոր վայրեր և երկրներ ու զրանով  
սպառնում էին թուլացնել Ռուսիայի աղղեցու-  
թիւնը որոշ վայրերի վրայ:

Մանր աղգութիւնների ճնշումը իմպերիալիս-  
տական պետութիւնների գոյութեան նախապայմանն  
էր: Իմպերիալիստական պատերազմը պարզում է, որ  
իմպերիալիստական պետութիւնները կոխ ևն մղում  
հէնց մանր աղգութիւններին ճնշելու համար: Ցարիզ-

մի տապալումը և նոր կառավարութեան կազմակերպումը ոչինչ, բնաւ ոչ մի փոփոխութիւն չի մտցնում: Այդ պատճառով այնքան, որքան ծայրամասերի «համադրային ինտիտուտները» ձգտում էին պետական անկախութեան, նրանց դէմ միշտ կանգնում էր Մուսաստանի իմպերիալիստական պետութիւնը: Իսկ երբ դրանք հաստատելով ազգային բուրժուազիայի իշխանութիւնը անուշադիր էին թողնում իրենց սեփական բանւորների և գիւղացիների շահերը նրանք լսում էին այդ բանւորների ու գիւղացիների բողոքը և անբաւականութիւնը:

Այսպէս կոչւած «ազգային գնդերը» աւելի ևս բորբոքում են այդ կրակը: Այն վտանգի դէմ, որը գալիս էր վերից նրանք անօջժ էին. իսկ վարից բարձրանող վտանգը նրանք աւելի ուժեղացնում ու խորացնում էին: «Համադրային» ինտաիտուտները անպաշտպան էին մնում թէ արտաքին և թէ ներքին հարձակների դէմ:

Նորածին բուրժուական—ազգային պետութիւնները դեռ չծաղկած սկսում էին թօշնել: Եւ այդպէս, «ազգութիւնների ինքնորոշման» սկզբունքի բուրժուական—գէմնիքատական ըմբռնումը դարձնում էր նրան Ֆիկցիա, և ոչնչացնում էր նրա լեզափոխական իմաստը: Պարզ է, որ այդպիսի պարագաներում մանր ազգութիւնների անկախութեան և ազգային ճնշումների ոչնչաց-

ցման մասին խօսք չէր կարող լինել: Զափազանց ակներե էր այն, որ աշխատաւոր մասսաների և ճնշւած ազգութիւնների ազատագրումը ու ազգային ճնշումների ոչնչացումը չի կարող իրականանալ քանի դեռ չի կտրւել կապը իմպերիալիզմի հետ, չի տապալւել բուրժուազիան և չի սանդղւել աշխատաւոր մասսաների իշխանութիւն: Դա առանձնապէս աչքի է ընկնում հոկտեմբերեան յեղաշրջումից յետոյ:

Հոկտեմբերեան Յեղափոխութիւնը և Ա.գ.գ.ային հարցը.

Փետրւարեան լեզափոխութիւնը կրում էր իր մէջ անհաշտելի հակասութիւններ: Յեղափոխութիւնը կատարւել էր բանւորների և գիւղացիների (գինւորների) միացեալ ուժերով. սակայն կառավարութեան ղեկն անցել էր ոչ թէ բանւորների և գիւղացիների ձեռքն, այլ բուրժուազիայի: Կատարելով լեզափոխութիւնը բանւորներն և գիւղացիները կամենում էին վերջ դնել պատերազմին և ձգտում էին ձեռք բերել հաշտութիւնը, սակայն բուրժուազիան կառավարութեան ղրօխն անցնելով աշխատում էր օգտագործել մասսաներին: Երկրի տնտեսական քայքայումը և սլաքենաւորման ճգնաժամը անհրաժեշտ էին դարձնում կապիտալների և արդիւնաբերական ձեռնարկութիւնների էքս-

պրօպրիացիան յօգուտ բանւորների, այնինչ Միլի-  
էով—Կերէնսկու բուրժուական կառավարութիւնը  
պաշտպանելով կապիտալիստների և պամէշչիկների  
շահերը պահպանում էր վերջիններին բանւորներից  
և դիւղացիներից:

Դա մի բուրժուական յեղափոխութիւն էր, որ  
կառարել էր բանւորների և դիւղացիների ձեռքե-  
րով յօգուտ «իրենց» շահագործողներին:

Չնայած դրան, երկիրը շարունակում էր ու-  
ժասպառ լինել իմպերիալիստական պատերազմի,  
տնտեսական տարրալուծման և պարենաւորման  
քայքայման շնորհիւ: Զօրաճակաւ քայքայւում էր:  
Փարբիկաներն ու դորժարանները կանգ էին առ-  
նում: Սովը երկրի մէջ ուժեղանում էր: Փետրւար-  
եան յեղափոխութիւնն իր ներքին հակասութիւն-  
ներով պարզեց, որ նա անկարող է «ազատել եր-  
կիրը»: Միլիէով — Կերէնսկու կառավարութիւնը  
պարզօրէն ապացուցեց, որ ռնրնդունակ է յեղա-  
փոխութեան արմատական հարցերը լուծելու:

Անհրաժեշտ էր մի նոր սոցիալիստական  
յեղափոխութիւն, որպէսզի երկիրը ազատէր իմ-  
պերիալիստական պատերազմից և տնտեսական քայ-  
քայումից: Հոկտեմբերեան յեղաշրջումը ստեղծում է  
այդպիսի յեղափոխութիւն:

Տապալելով կալուածատիրական ու բուրժուա-  
կան կառավարութիւնը և հաստատելով նշա փո-

խորէն բանւորական և գիւղացիական կառավարու-  
թիւն, հոկտեմբերեան յեղափոխութիւնը մի հոր-  
ւածով լուծում է փետրւարեան յեղափոխութեան  
հակոտութիւնները: Պամէշչիկական—կուլակային տի-  
րակալութիւնը ոչնչացնւում է և հողը յանձնւում  
է աշխատաւոր մասսաներին: Գործարաններն և զա-  
ւօդները խլւում են դորժարանատէրերից և տր-  
ւում են բանւորների հսկողութեանը: Իմպերիա-  
լիզմի հետ բոլոր կապերը կտրւում են և վերջ է  
տրւում աւաղակային պատերազմին: Յայտարարւում  
են գաղտնի պայմանագրերը: Վերջապէս յայտա-  
բարւում է ճնշւած ժողովուրդների աշխատաւոր  
տարրերի ինքնորոշումը և ճանաչւում է Ֆին-  
լանդիայի անկախութիւնը:

Բոլոր այդ հիմնական կտրադրութիւնները  
Խորհրդային իշխանութիւնը կատարել է յեղափո-  
խութեան պրօցեսում:

Դա եղել է իրապէս սոցիալիստական մի  
յեղափոխութիւն:

Կենտրոնւում օկսւած յեղափոխութիւնը չէր  
կարող երկար ժամանակ ընթանալ կենտրոնի նեղ  
տերթիտօրիայի սահմաններում: Յաղթանակելով կեն-  
տրոնում յեղափոխութիւնն անհրաժեշտաբար պէտք  
է տարածւէր նաև Ռուսիայի ծայրամասերում:  
Այդպէս էլ լինում է: Յեղափոխութիւնը հէնց ա-  
ռաջին օրերին հիւսիսից տարածւում է բոլոր Ռու-

սաստանի անբրիտորիայի վրայ: Ստիպան ժայրամասերում յեղափոխութեան առաջ կանգնում են խոչնդոտներ յանձին բոլոր այն «Ազգային Խորհուրդներին» և անդական «կառավարութիւններին» (Դոն, Կուբան, Սիբիր) որոնք կազմել էին ղեկմինչև հոկտեմբերեան յեղափոխութիւնը: Խնդիրը նրանումն է, որ այդ «ազգային կառավարութիւնները» ոչինչ չէին ցանկանում լսել սոցիալիստական յեղափոխութեան մասին: Իրենց էութեամբ լինելով բուրժուական նրանք ամենեւին չէին ցանկանում քանդել հին, բուրժուական աշխարհը. բնդհակառակը, նրանք իրենց պարտքն էին համարում պահպանել և ամրացնել ամեն կերպ բուրժուական կարգերը: Իրենց էութեամբ լինելով իմպերիալիստական նրանք ամենեւին չէին կամենում կտրել իրենց կապը իմպերիալիզմի հետ. բնդհակառակը, նրանք միշտ պատրաստ էին յարմար պարագաներին զաւթել և իրենց նպատակութեան ենթարկել «օտար» ազգութիւնների կտորները: Այդ պատճառով զարմանալի չէ այն, որ բոլոր ազգային կառավարութիւնները ժայրամասերում պատերազմ են յայտարարում կենտրոնի սոցիալիստական կռաւարութեան: Յայտարարելով այդ պատերազմը նրանք անհրաժեշտաբար դառնում են ռէակցիայի օջախներ և իրենց շուրջն են խմբում Ռուսիայի բոլոր հակայեղափոխական ոյժերը: Ոչ ոքի համար

գաղտնիք չէ այն, որ Ռուսիայից քշւած բոլոր այդ հակայեղափոխականները վաղում են ղէպի այդ օջախներն և այդանդ կազմակերպում են սպիտակ «ազգային» զօրագունդեր:

Ստիպան բացի այդ «ազգային» պետութիւններից ժայրամասերում կային նաև բանւորներ և գիւղացիներ: Դրանք կազմակերպել էին իրենց յեղափոխական Սովգէպները Ռուսական Սովետների նման նոյնիսկ մինչև հոկտեմբերեան յեղաշրջումը և այդ պատճառով նրանք չէին կտրում յարաբերութիւնները հիսիսում զօրծող իրենց եզրայրների հետ: Նրանք նոյնպէս կամենում էին կռել յանուն սոցիալիզմի և յաղթել բուրժուադիային: Օրրստօրէ ուժեղանում էր ժայրամասերի բանւորա-գիւղացիական տարրերի անբաւականութիւնը. հականմբերեան յեղափոխութիւնը միմիայն ամբասցրել է ժայրամասերի բանւորների և գիւղացիների միութիւնը Ռուսիայի Բանւորա-Գիւղացիական տարրերի հետ: Իսկ այն պատերազմը, որ սկսել են ազգային կառավարութիւնները Սովետական Իշխանութեան դէմ այնքան սրում է բանւորա - գիւղացիական տարրերի անբաւականութիւնը որ առաջ է բերում բացարձակ ապստամբութիւն «ազգային իշխանութեան» դէմ:

Այդպէս է կազմել համայն Ռուսաստանի բանւորների և գիւղացիների սոցիալիստական միութեան

Թիւնը ընդդէմ ծայրամասերի ազգային-բուրժուական «կառավարութիւնների» հակայեղափոխական միութեան:

Կան մարդիկ, որոնք կարծում են թէ ծայրամասերի «պետութիւնների» պայքարը աղետադրական մի պայքար է, որ մղւում է Խորհրդային Իշխանութեան «կոպիտ ցենտրալիզմի» դէմ: Սակայն այդ ճիշտ չէ: Ոչ մի իշխանութիւն երկրագունդի վրայ գեռ էս չի թույլադրել այնքան լայն ապուկենարոնացում, աշխարհի ոչ մի կառավարութիւն գեռ էս չի տւել ժողովուրդներին այնքան մեծ ազգային ազատութիւն, սրտէս այդ բոլոր է Խորհրդային Իշխանութիւնը Ռուսաստանում: Ծայրամասերի կառավարութիւնների պայքարը իրապէս բուրժուական հակայեղափոխութեան պայքարն է ընդդէմ սոցիալիզմի: Ազգային զրօշը հանգէս է բերւում որպէս յարմարագոյն մի զրօշ մասսաններին խարելու և ազգային բուրժուազիայի հակայեղափոխական տենչերը վարադուրելու համար:

Բայց «ազգային» և «տեղական» կառավարութիւնների պայքարը անհաւասար մի կռիւ էր: Մի կողմից Խորհրդային Իշխանութիւնը, իսկ ներքին Ֆրոնտում «սեփական» բանւորներն և զիւղացիները ստիպեցին այդ «ազգային» կառավարութիւններին» հէնց առաջին կռիւներից յետոյ չիտ նահանջել: Ֆիննական բանւորների և տօրպարների

ապստամբութիւնը և բուրժուական «Սենատի» փախուստը. Ուկրաինական բանւորների և զիւղացիների ապստամբութիւնը և բուրժուական Ռադայի փախուստը. Բանւորների և զիւղացիների ապստամբութիւնը Դոնի շրջանում, Կուբանում, Սիբիրում և Կալէդինի, Կարնիլովի, Սիրիբտկան «Կառավարութեան» անկումը. Թուրքեստանի չքաւորութեան ապստամբութիւնը և «Ավտօնօմ կառավարութեան» փախուստը. Ազրաբային չեղափոխութիւնը Կովկասում և Վրաստանի, Հայաստանի, Ադերբեյջանի «ազգային խորհուրդների» կատարեալ անընդունակութիւնը — ալգպէս են բոլորին յայտնի այն փաստերն, որոնք ցուցադրում են, թէ որքան կտրւած, են ծայրամասերի «կառավարութիւններն» «իրենց» մասսաններից: «Իրենց» բանւորներին և զիւղացիներին ջարդելու համար — պարտւած ազգային կառավարութիւնները ստիպւած դիմում են Արեւմուտքի իմպերիալիստներին և օգնութիւն են խնդրում համայն աշխարհի մանր ազգութիւնների զարեօր ալդ բանակալներից և շահագործողներից:

Այդպէս է ոկուել ծայրամասերի օկկուպացիան, օտարերկրացիների այն միջամտութիւնը, որը նորից, մի աւելորդ անգամ մերկացրել է «ազգային» և տեղական «կառավարութիւնների» հակայեղափոխական բնույթը:

Միայն դրանից յետոյ է պարզուում, որ ազգային բուրժուազիան ոչ թէ ձգտում է ազատագրել «իր» ժողովուրդը ազգային ճնշումներից, այլ կամենում է աղատօրէն շահագործել ժողովուրդին և պահպանել իր բոլոր իրաւունքներն և կապիտալը:

Միայն այժմ է պարզուում, որ ճնշած ժողովուրդները չեն կարող ազատագրուել, քանի պահպանում են որոշ կապ իմպերիալիզմի հետ, քանի տապալում չէ ճնշած ազգութիւնների բուրժուազիան և իշխանութիւնը չի անցել այդ ազգութիւնների աշխատաւոր մասսաների ձեռքը:

Ինքնորոշման սկզբունքի բուրժուական կիրառումը և «բոլոր իշխանութիւնը ազգային բուրժուազիային» լոգունդը այդպիսով մերկացել և դէն է նետուել շնորհիւ լեղափոխութեան ընթացքի: Եւ դրա փոխարէն, գոյութեան և կիրառման իրաւունք է ստացել ինքնորոշման սոցիալիստական բմբռնումը և «ամբողջ իշխանութիւնը ճնշած ազգութիւնների աշխատաւոր մասսաներին» լոգունդը: Այդպիսով, հոկտեմբերեան լեղաշրջումը, վերջ տալով հին, բուրժուական—ազատագրական ազգային շարժմանը, բաց է արել ճնշած ազգութիւնների բանւորների և գիւղացիների սոցիալիստական, նոր շարժման շրջանը. այդ շարժումը ուղղուել է իւրաքանչիւր, հետևա-

բար նաև ազգային ճնշումների դէմ, ուղղուել է «սեփական» և օտար բուրժուազիայի և ընդհանրապէս իմպերիալիզմի դէմ:

Հոկտեմբերեան լեղափոխութեան համաշխարհային նշանակութիւնը:

Հոկտեմբերեան լեղափոխութիւնը յաղթանակելով Ռուսիայում չէր կարող մնալ Ռուսիայի տերրիտորիայի սահմաններում: Իմպերիալիստական համաշխարհային պատերազմի և վարի խաւերի ընդհանուր տնթաւականութեան շնորհիւ նա անհրաժեշտաբար պէտք է մտնէր նաև հարևան երկրների սահմանները: Դժնշած արեւելքի և արիւնաքամ լիճոց արեւմուտքի վրայ չէր կարող չազդել այն, որ Ռուսաստանը կտրել է իր բոլոր կապերը իմպերիալիզմի հետ, թողել է աւազակային պատերազմը, յայտարարել է դադարի պայմանագրերը, հրաժարուել է օտար երկրների բռնակալութեան քաղաքականութիւնից, յայտարարել է ազգերի ազատութիւնը, ճանաչել Փինլանդիայի անկախութիւնը, յայտարարել Ռուսաստանը «Խորհրդային ազգային հանրապետութիւնների գաշնակցութիւն» և առաջադրել արեւելքի և արեւմուտքի ժողովուրդների մայրենի լեզուի միլլիոնաւոր բրօշուրների, լրագիրների, թռուցիկների մէջ հակաիմպերիալիստական կռիւ լոգունդը:

եւ ճիշտ որ, հոկտեմբերեան լեղափոխութիւնը առաջին լեղափոխութիւնն է, որ արթնացնելով արեւելքի ճնշած ժողովուրդների աշխատաւոր մասսաները բարձրացնում է նրանց ընդդէմ համաշխարհային իմպերիալիզմի: Այդ կողմից նշանակալից է այն, որ Պարսկաստանում, Չինաստանում, Հնդկաստանում հազմել են բանւորական և զիւղացիական խորհուրդներ: Հոկտեմբերեան լեղափոխութիւնն առաջին լեղափոխութիւնն է պատմութեան մէջ, որ դառել է արեւմուտքի բանւորների և զինւորների համար կենդանի աղատարար մի օրինակ և մղել է նրանց դէպի կռիւ ընդդէմ իմպերիալիզմի: Բանւորների և զինւորների ապստամբութիւնն Ավստրո-Հունգարիայում և Գերմանիայում, բանւորական և զինւորական խորհուրդների կողմակերպումը, Ավստրո-Հունգարիայի ժողովուրդների լեղափոխական պայքարն ընդդէմ ազգային ճնշումների բաւականաչափ ցայտուն կերպով պարզում է այդ բոլորը: Այդ պայքարը արեւելքում և նոյն իսկ արեւմուտքում դեռեւս չի ընդունել անաղարտ լեղափոխական օոցիալիստական կռիւ բնոյթ, օակայն խնդիրը նրանումն է, որ կռիւը ընդդէմ իմպերիալիզմի արդէն սկսւել է, այդ կռիւը շարունակւում է և նա անհրաժեշտաբար պէտք է հասնի իր տրամաբանական վախճանին:

Օտարների միջամտութիւնը և «տրտաբխն»

իմպերիալիստների օկուպացիոն լեղաքանդում: Թիւնն աւելի ևս սրում է լեղափոխական ծանր, կռիւ մէջ են նետում տարբեր ժողովուրդներ և լայնացնում են իմպերիալիզմի և լեղափոխականների միջև մղւող պատերազմի ռաջօնը: Այդպէս՝ հոկտեմբերեան լեղաշրջումը կապելով լիտամիաց արեւելքի ժողովուրդներին առաջագէմ արեւմուտքի ժողովուրդների հետ խմբում է նրանց ընդհանուր այն բանակի մէջ, որը կռիւ է մղում իմպերիալիզմի դէմ: Այդպէս՝ ազգային խնդիրը մասնաւոր հարցից դառնում է ազգութիւնների, զաղութների և կիսազաղութների ազատագրման մի ընդհանուր հարց:

Երկրորդ Բնաբնացիօնալի և նրա ղեկավար Կառուցիւ մահացու մեղքը կայանում է ի միջի ալլոց նրանում, որ նրանք միշտ մօտեցել են ազգութիւնների ինքնորոշմանը բուրժուական տեսակէտից առանց ըմբռնելու ինքնորոշման սկզբունքի լեղափոխական իմաստը: Նրանք չեն կարողացել կամ չեն ջանկացել ըմբռնել, որ ազգային խնդրի լուծման համար անհրաժեշտ է պայքարել իմպերիալիզմի դէմ և ազատագրել զաղութները իմպերիալիստական բռնակալութիւնից:

Ավստրիայի սօցիալ դէմօկրատների—Բաուերի և Ռէնների բթամտութիւնը իրապէս հէնց նրանումն է, որ նրանք չեն կարողացել տեսնել այն



1003  
1921

անքակտելի իպար, որ գոյութիւն ունի ազգային խնդրի և իշխանութեան խնդրի մէջ, նրանք ձգտել են մեկուսացնել ազգային խնդիրը պոլիտիկայից: Նրանք համարել են ազգային խնդիրը կուլտուրա-կրթական խնդիր և մոռացել են այնպիսի «մանր խնդիրներ», ինչպէս է՝ իմպերիալիզմը և նրա բռնակալութեան տալի գոնուող զաղութների խնդիրը:

Ստուժ են, թէ ինքնորոշման և հայրենիքի պաշտպանութեան» սկզբունքները շնորհիւ իրերի բնթացքին և սոցիալիստական լեղափոխական վերացւած պէտք է համարւեն:

Իրապէս, վերացնում են ոչ թէ ինքնորոշումը և «հայրենիքի պաշտպանութիւնը» այլ այդ սկզբունքների բուրժուական ըմբռնումը:

Բաւական է միայն քննել այն վայրերն, որոնք զբաււած են իմպերիալիստների կողմից և ձգտում են ազատութեան, բաւական է միայն քննել Ռուսաստանը, որը լեղափոխական պատերազմ է մղում վայրենի իմպերիալիզմի հետ իր սոցիալիստական հայրենիքի պաշտպանութեան համար, բաւական է միայն վերլուծել այն պէպքերը, որ կատարւում են Սպարո-հունգարիայում. բաւական է միայն քննել այն դաշութների վիճակը, որոնք ճնշւել են իմպերիալիստների կողմից (Նիդէրլանդներ, Պարսկաստան, Զինաստան) և արդէն կադախարակ են իրենց

մօտ Խորհուրդներ: Այդ բոլորից երևում, է որ ինքնորոշման սկզբունքը, այդ սկզբունքի սոցիալիստական ըմբռնումը ունի լեղափոխական նշանակութիւն և արժէք:

Նկատեմքերեան լեղափոխութեան մեծ, համաշխարհային նշանակութիւնը կայանում է դիսաւորապէս նրանում, որ նա՝

1) Լայնացրել է ազգային խնդրի շրջանակները, ասպարեզի վրա է դրել ոչ թէ ազգային ճնշումների մասնաւոր խնդիրը, այլ ճնշւած ազգութիւնների, ժողովուրդների և կիսազաղութների ազատագրման խնդիրը:

2) Ստեղծել է ամենալայն հնարաւորութիւններ և իրական ուղիներ այդ ազատագրման համար և զբաղով հեշտացրել է Սրեմուտքի և Սրեկլքի ճնշւած ժողովուրդների ազատագրման գործը, նեւտել է նրանց իմպերիալիզմի դէմ մղուող յաղթական պատերազմի մէջ:

3) Այդպիսով կամուրջ է հաստատուել սոցիալիստական Սրեմուտքի և ճնշւած Սրեկլքի միջև ու ստեղծւել է լեղափոխութեան մի նոր ֆրօնտը դրդէմ միջազգային իմպերիալիզմի:

Դրանով է լատկապէս բացատրւում թէ՛ աննկաբողրելի ողևորութիւնն, որով վերաբերւում են ներկայումս Սրեկլքի և Սրեմուտքի աշխատաւոր

և շահագործող մասնաները դէպի համառուսու-  
կան պրոլետարիատը:

Դրանով է զլիսաւորապէս բացատրուում այն  
դազանային կատաղութիւնը, որը համակել է Խոշ-  
հրդային Ռուսիայի դէմ նետուող աշխարհի իմպեր-  
իալիստական վարքենիներին:



<< Ազգային գրադարան



NL0239828

Գինն է՝ 3 ռուբ.

